

ԽՈՐԵՆԱՑԻ ԵՎ ՓԱՎՍՏՈՍ

ՀՐԱՆՏ Ք. ԱՐՄԵՆ (ԱՄՆ)

Բանասերներեն շատեր կպնդեն, թե Խորենացիին՝ իր գրի առած պատմության երրորդ գրքին համար օգտագործած աղբյուրներեն մին էր Փավստոս Բուզանդ, որ մեզի անհայտ պատճառով պատմահայրը չէ ուզած անունը հիշել:

Օրինակ, Մանուկ Աբեղյան Խորենացիի մասին գրելուն կհավելու. «Երրորդ գիրքը «Աւարտաբանութիւն մերոց Հայրենեաց», բովանդակում է Տրդատի մահից մինչև Մեսրոպի մահը: Քննությունը ցույց է տվել, որ օգտվել է Փավստոս Բուզանդից, առանց նրա անունը տալու»¹: Աբեղյան պատճառ մը ցույց չտար, թե ինչու Խորենացին Փավստոսի անունը չէ տված: Ոչ ալ կհիշե, գոնե համառոտակի, այն քննության մասին, որ ցույց տվել է Փավստոս Բուզանդից օգտվելու պարագան:

Ն. Ադոնց ալ ավելի կրնդարձակե Խորենացիի Փավստոսեն օգտվելու ծիրը: Ան կընդունի, թե Խորենացի ծանոթ էր Փավստոսի լիակատար պատմության (Ա—Ձ դպրություն), և ինչպես որ անոր Գ գիրքը համառոտություն է Փավստոսի Գ—Ձ դպրություններուն, այնպես ալ հավանորեն Ա և Բ գրքերը համառոտություն են Փավստոսի այժմ կորած Ա և Բ դպրություններուն, լրացրած ուրիշ աղբյուրներով²:

Ա. Զամինյան Խորենացիի աղբյուրները հիշելուն կգրե. «Եվ անշուշտ Փավստոսին, թեև այս վերջինին անունը չի հիշատակեր: ...Բացատրել, թե ինչու համար նորա անունը չի հիշատակեր՝ դժվար է: Երևի թե Խորենացին ալ Փավստոսի պատմության վրա այն հայացքն ունի, ինչ որ և Փարպեցին, և շատ դեպքեր Փավստոսեն տարբեր պատմելով Խորենացին իր կարծիքով ավելի հայության պատիվը կբարձրացներ, օրինակ Պապի մահը»³:

Զարմանալի: Հայոց թագավորին սպանությունը փոխանակ հույն զորապետի կոզմե ըլլալուն հույն կայսեր հրամանով կատարվիր ինչպե՞ս հայության պատիվը բարձրացրած պիտի ըլլար:

Սակայն մեր ուշադրության առարկան պիտի դարձնենք Ստեփան Մալխասյանի հայտնած գաղափարը, որ վերջին արտահայտվողն էր այս հարցի շուրջ, և որուն հեղինակությունը և բանասիրական հմտությունը հավելյալ կշիռ մը կուտան իր ըսածին:

Մալխասյան Փավստոսի իր աշխարհաբար թարգմանության սկզբին դրած ընդարձակ ներածության մեջ հարմար դատած է Խորենացի և Փավստոս վերնագրով առանձին մաս հատկացնել⁴, ուր, նման շատ մը ուրիշներու, կրսե թե Խորենացին օգտված էր Փավստոսեն առանց անոր անունը հիշելու:

1 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Ա գիրք, Երևան, 1944, էջ 279:

2 Ստ. Մալխասյան, Փավստոսի պատմություն, Երևան, 1947, էջ 22:

3 Ա. Զամինյան, Պատմություն հայոց գրականության, Պեյրուի, 1941, էջ 100:

4 Ստ. Մալխասյան, նույն տեղում, էջ 69—75:

Գոհ ենք, որ Մալխասյան ուրիշներեն քայլ մը ավելի առաջ երթալով պատճառ մը ցույց կուտա, թե ինչու խորենացին Փափստոսեն օգտվելով հանդերձ, չէ ուզած անոր անունը հիշելու Անտարակույս բազմահմուտ բանասերի-տրամաբանող միտքը սույն հարցումը բրած էր և եզրակացուցած, թե այդ ինչու-ին պատասխան մը տալ անհրաժեշտ է:

Մալխասյանի գտած պատճառը հետևյալն է: Խորենացին չէ ուզած Փափստոսի անունը տալ, որովհետև Փափստոսի առասպելախառն «ժողովածուն իրրև պատմական աղբյուր հիշելը խորենացու կարծիքով՝ ստվեր կձգեր իր պատմության վրա»⁵:

Խորենացիի իմացական անհատականության և իր աղբյուրները կշռադատելու մեթոդին ծանոթ մեկը Մալխասյանի այս պատճառարանությունը կգտնե րոնագրոսիկ: Հավանաբար Մալխասյան ինքն ալ տարակույսի վայրկյան մը ունեցած ըլլա, կամ թերահավատներու կասկածը նախատեսելով, իր գտած այս պատճառարանության ամուր հիմեր հայթայթելու մտոք երկար բաղդատականը կրնե երկու մատենագիրներու պատմագիտական ըմբռնման:

Տանք այդ բաղդատականեն մասեր, որ ինքնին ուսանելի շատ կետեր ունի, որպես վաստակավոր բանասերի ուղիղ դատումներուն, առանց, սակայն, այդ դատումներեն հանած իր եզրակացության հետ համաձայնելու, զոնե ևս:

«Խորենացին ժամանակագրությունը համարում է պատմության անհրաժեշտ հատկություն» (69): «Այնինչ Փափստոսը ժամանակագրություն չունի. նրա համար գոյություն չունի ժամանակագրություն» (70):

«Խորենացու մեջ զարգացած է քննադատական ոգին»: «Փափստոսը միանգամայն զուրկ է քննադատական ոգուց» (70):

«Խորենացին ռացիոնալիստ է, զերրեական տարրին տեղ չի տալիս իր պատմության մեջ»: Իսկ Փափստոսի մոտ հրաշքներն առատ են, ինչպես սովորական երևույթներ: Հեղինակն այնպիսի հավատով և լրջությամբ պատմում է հրաշքները, ինչպես պառավ տատիկը պատմում է թոռնիկներին հեքիաթների հրաշալի դիպվածները» (70—71):

«Խորենացին իսկական մտածող հեղինակ է, նրա ամեն մի խոսքը շափված է, կշռված է, ոչ ավելորդ խոսք, ոչ շափազանցություն»: «Իսկ Փափստոսի մոտ բառերը հեղեղորեն» հոսում են, նա հաշիվ չէ տալիս իրեն իր գործածած ամեն մի բառի մասին, կրկնություններն ու շափազանցությունները սովորական երևույթ են նրա մոտ» (71):

«Խորենացին ձգտում է զրել հավաստի պատմություն, որի մեջ դեպքերը հաջորդում են միմյանց ժամանակագրական կարգով և ներքին պատճառարանական կապ ունին իրար հետ»: «Իսկ Փափստոսի մեջ դեպքերը կուտակված են անխտիր և խառն, առանց պատճառարանական կապի կամ ժամանակի հաջորդության» (72):

«Խորենացին խիստ արհամարհում է պարսից առասպելները, կոշելով նրանց անպիտան, անճոռնի, անհարմար, անճաշակ անբանություն»: «Իսկ Փափստոսի պատմությունը լիքն է պարսկական ճաշակի առասպելներով» (72) և այլն:

«Այս տարրերությունները», կհավելու Մալխասյան, կարելի էր դարձյալ արունակել, բայց այսքանն ալ բավական է, ցույց տալու համար, թե որքան

⁵ Նույն տեղում, էջ 73:

մեծ է զանազանությունը երկու հեղինակների հայացքների մեջ պատմական գրվածքի էության և նպատակի մասին: Այս տեսակետից երկու գրվածքների մեջ սար ու ձորեր կան» (72):

Ապա հետևյալ եզրակացությունը կհանն Մալխասյան. «Սրանից արդեն հեշտ է նախագուշակել, թե ինչպես պետք է վերաբերվեր Խորենացին Փավստոսի գրվածքին — բուզանդարան պատմություններին իբրև պատմական աղբյուրի: Նա եթե չի հիշում Փավստոսի անունը՝ նրանից չէ, որ կամեցել է թաքցնել իր աղբյուրը, ինչպես Լևոնիդը ևն ոմանք: ...Նա չի հիշել Փավստոսին բոլորովին այլ պատճառով — նրա գրվածքի ոգու և բովանդակության պատճառով, որ լուրջ կրիտիկայի չի դիմանում» (73):

Եվ, ինչպես վերը հիշեցինք, Մալխասյան կվերջացնե ըսելով, թե Փավստոսը «իբրև պատմական աղբյուր հիշելը Խորենացու կարծիքով ստվեր կծղեր իր պատմության վրա» (79):

Մալխասյանին վերևի մեջբերումները կարդալուց թերևս դուռն ալ ինծի պես զարմացած հարց տվիր թե՛ եթե Փավստոս այսքան խեղճ ու կրակ, կրիտիկայի չդիմացող պատմադիր է, ինչպես կըլլա որ ռացիոնալիստ, քննադատական ոգին զարդացած, իսկական մտածող Խորենացին, պատմական ի՞նչ դեպքերու մասին դրած կրնար ըլլալ, որոնց մասին ուրիշ որևէ աղբյուր գոյություն չունենալուն ստիպված էր դիմել Փավստոսին և անոր առասպելախառն կուտակված զլուխներուն մեջեն ոչ միայն փնտրած պատմականը ջոկել առասպելեն, այլ երբեմն ալ դեպք մը ջոկել վերջ, զայն բոլորովին փոփոխել ու այդպես դնել իր պատմության մեջ որպես հավաստի իրողություն:

Մեզ զբաղեցնող այս խնդրի քննության անցնելուս, առաջին հարցումը, որ կդիմագրավե մեզ, է՝ առհասարակ, ի՞նչ է Խորենացիի վերաբերումը իր օգտագործած աղբյուրներուն հանդեպ: Եթե հետևողական մեթոդ մը ունի, որուն կառչած կմնա, այդ պարագային շատ ավելի զորավոր փաստի պետք ունինք ապացուցելու պատմահոր իր որդեգրած մեթոդեն շեղում կատարելը Փավստոսի պարագային, քան Մալխասյանի ենթադրությունը, թե Փավստոսը հիշելը ստվեր կծղեր Խորենացիի պատմության վրա:

Նույնիսկ մակերեսային քննություն մը Խորենացիի գրքին կցուցադրե գրեթե արդիական գիտական մեթոդ մը պատմահոր կողմն: Այն է՝ իրեն աղբյուր ծառայած հեղինակներու քննություն, քննադատություն և երբեմն մեկը մյուսին հետ բաղդատություն: Կարծես դատախազի պես կհարցապնդե յուրաքանչյուր պատմադիր՝ իմանալու, թե որքան հավաստի է ըսածը:

Խորենացին ապշեցուցիչ պատրաստակամություն ցույց կուտա իր գործածած աղբյուրներու հեղինակներուն անունները հիշելու մեջ: Ոչ մեկ հայ հին մատենագիր այսչափ բազմաթիվ — և մեր ականջին օտարոտի — անուններ կհիշե քան Խորենացին: Ոչ միայն հիշել, այլ հաճախ անոնց արժանահավատության մասին իր քննական գաղափարը հայտնել:

Երբ պատմագրելիք դեպքի մասին մեկն ավելի աղբյուր ունի, յուրաքանչյուրը կքննե, կկշռադատե և տրամաբանական համարածը կյուրացնե: Օրինակ, Շամիրամի մեկ պատերազմի մասին գրելուն երկու աղբյուր իր քննության առարկա կըլլա: Կեփաղիոն և Մար Աբաս Կատինա: Կնախրնտրե վերջնունն ասածը. «Անգի ավելի հավանական կթվի Մար Աբաս Կատինայի կատա-

րած քննությունը քաղղեական մատյաններու, քան այս (Կեփաղիոն), որովհետեւ տեղին կպատմեւ և պատերազմի պատճառն ալ ցույց կուտայ»⁶։

Կուզեմ ավելի օրինակներ տալ հորենացիի իր աղբյուրները հիշելու վերպին, որովհետեւ երբ պատմահոր դիրքը, վարկը, նույնիսկ անձը մոլեգին հարձակողականի կենթարկվեր, գտնվեցան բանասերներ, որ զինք ամբաստանեցին աղբյուրներն ոմանք դիտումնավոր չհիշելուն։ Եվ առ այդ կարկառուն օրինակ կտրվեր Փափստոս։ Գտնվեցավ մեկը, որ զիրք միսկ զրեց, Վիեննայի Միխիթարյան տպարանի հրատարակություն, որ հորենացիի ինչպիսի նենդամիտ ըլլալը ցույց կուտար նույնինքն զրքի անունեն. Փափստոս Բյուզանդացի և իր պատմության խաբախողը։

Տանք քանի մը օրինակներ, որոնք ցույց կուտան հորենացիի քննական վերաբերումը։

«Բայց ես այժմ կուրախանամ իմ առաջիկա խոսքերուն սկիզբ դնելով ինձ սիրելի և շատերեն ավելի ճշմարտախոս Բերոսյան Սիրիլլային» (Ա, 6)։

«Կսկսինք պատմել քեզ Ափրիկանոս ժամանակագրի հինգերորդ գրքեն, որուն կվճայն Հովսեփոս և Հյուպոդիտա և ուրիշ շատերը հույներեն» (Բ, 10)։

Արտաշէսի տիեզերակայության և Կրեսոսի մասին գրելուն, գլուխը կսկսի այսպես. «Այս բանը կրսեն հույն պատմագիրները, ոչ մեկը կամ երկուքը, այլ շատերը, որու մասին տարակուսելով մենք շատ քննություններ կատարեցինք» (Բ, 13)։ Ապա երկար մեջբերումներ կրնն Պոլիկրատես, Եվագարոս, Սկամագրոս և Փղեգոնիոս պատմագիրներն և անոնց քննութենեն հանած եղրակացությունը բերի կառնել։

«Այս բանը մեզ հաստատապես կպատմեւ Հանիի Ողյումայ քուրմը, որ գրած է մեհենական պատմություններ և ուրիշ շատ գործեր, որ մենք պատմելու ենք, որուն կվճայն նաև պարսից մատյանները և հայոց վիպասաններու երգերը» (Բ, 48)։

«Մեզ այս բաները կպատմեւ Բարդաժանը, որ Եղեսիային էր։ Որովհետեւ նա վերջին Սնտոնիոսի ժամանակ պատմագիր հանդիսացավ։ Նա առաջ կհետներ Վաղենտինոսի աղանդին, որ հետո անարգեց, ստությունը երեսն հանելով, սակայն ինքն ալ ճշմարտության չհանգեցավ, այլ միայն անկե զատվելով ինքն իրմն նոր աղաք հնարեց։ Բայց պատմության մեջ չստեց» (Բ, 66)։

«Այս հոռոհորդը պարսից Շապուհ թագավորի զպիրը եղած է և հույներու ձեռքը ինկած։ ...Մեր հավատքը բնդունելով Եղիազար կոչվեցավ և հունարեն սովորելով գրեց Շապուհի և Հուլիանոսի գործերուն պատմությունը։ Ասոր հետ միասին ան թարգմանեց հին պատմությունը պարունակող գիրք մը, որ գրած էր իր գերեկից մի ոմն Բարսումա, որտեղեն առնելով մենք այս գրքի մեջ կրկրկենք» (Բ, 70)։

հորենացին նույնիսկ իր հավնած մեկ պատմագրի անբավարար գրածը քննադատելու չի տատամսիր։

«Կապագովկիական Կեսարիայի Փերմիլիանոս եպիսկոպոսը սքանչելի էր ուսումնասիրությամբ... Նա շատ գրություններ գրեց, որոնցմե մեկն է պատմությունը եկեղեցու հալածանքի... նույնպես կգրեւ, թե մեր աշխարհի մեջ ալ շատերը նահատակվեցան հոսքովի ձեռքով և անկե վերջ ուրիշները ուրիշներեն։ Բայց որովհետեւ հավաստի և կարգին չպատմեր, ոչ ալ անունները կնշա-

⁶ Ե ո Ր Ե Ն ա Յ ի, Ա, 18։

նակե և նահատակության վայրերը, ուստի մենք ալ կարևոր չհամարեցինք կրկնել» (Բ, 75)։

Բավականանք այս օրինակներով։ Խորենացիի համար առաջնորդող սկզբունք դարձած է հավաստին գտնել և հաղորդել։ Եվ այդ սկզբունքն ալ դրդած է զինք ուշիվ քննելու աղբյուրները։ Հող չէ, թե երբեմն այդ հավաստին մեր այժմյան բծախնդիր քննությամբ սխալ եղած ըլլա, որքան ատեն որ իր քննող և դատող միտքը հավաստի համարած է, ան չէ վարանած օգտադործելու այդ։ Հավաստին գտնելու մշտակա հոգը և ճիգը իր պատմության մեջեն կանցնի կարմիր երիզի նման, որով կուգե ամբողջը կապված տեսնել։ Գրեթե հուզիչ բան մը կա իր այս որոնումին մեջ։ Այո, հուզիչ, երբ զոր օրինակ կարդաս իր մեկնաստին ուղղած հետևյալ բառերը. «Եվ քեզի ալ, ինչպես շատ անգամ, այժմ ալ կաղաչեմ, մեզի մի ստիպիր ավելորդ բաներ գրելու, չըլլա որ այդպիսի քիչ կամ շատ պատմություններով մեր այս մեծ և հավաստի ամբողջ աշխատությունը անպետք և ավելորդ դառնա, որ հավասարապես վտանգ է թե ինձի և թե քեզի»։

Հարմանալիորեն Մալխասյան և այն բանասերներ, որ կայնդեն Խորենացիին Փավստոսին օգտված ըլլալու գաղափարը, մեզի չեն տար համոզիչ ցուցմունք մը, ուր ականերև հայտնվի Խորենացիին Փավստոսին առած ըլլալու պարագան։ Պատմական կարգ մը դեպքերու երկուքին կողմն ալ հիշված ըլլալը — մանավանդ երբ այդ դեպքերը արտասովոր բնույթ չունին — հազիվ թե ընդունելի ըլլա որպես վճռական փաստ ապացուցանելու մեկուն մյուսին օգտված ըլլալու վարկածը։

Այս մեկ պարագային անոնք բոլորովին մեկզի ձգած են բանասերներուն այնքան ընտանի — չըսելու համար սիրելի — մեկ մեթոդը, ուր երկու հեղինակներու պրքերեն տողեր կամ հատվածներ դեմ դիմաց կդրվին ցույց տալու, թե ինչպես մեկ մատենագիր մյուսին փոխ առած է։ Օրինակ, Ագաթանգեղոսին և Կորյունեն համանման տողեր բաղդատելով կըսեն առաջինը օգտված է երկրորդին։ Նման օրինակներ դիտու պտույտ տալու աստիճան շատ են հայագիտական գրություններու մեջ, խալաթյանցեն մինչև Ակինյան, մինչև հիմա։ Ասոնք հաճախ, եթե ոչ միշտ, լեզվական կամ շարադրական նմանություններ կըլլան, որոնք կհամարվին ավելի ազդու փաստեր, քան դեպքի մը հիշատակումը երկուքեն ալ։ Իսկ Խորենացիի և Փավստոսի պարագային այդ տեսակ համանմանություններ ցույց չեն տրված ցարդ։

Ավելի հետաքրքրական երևույթ է պատմահոր Փավստոսին օգտված ըլլալու մտասկեռումը աներկբայելի ընծայելու համար հայտնված տրամաբանությունը։ Զոր օրինակ, երբ պատմական դեպք մը երկու հեղինակներ իրարմե բոլորովին տարբեր կպատմեն, փոխանակ ըսելու, թե յուրաքանչյուրը տարբեր աղբյուրն էր օգտված է, կըսեն՝ Խորենացիին Փավստոսին առած է և առնելին վերջ փոխած է, որովհետև անոր ըսածին չէ հավատացած։ Այս մեր ըսածին կարկառուն օրինակ կծառայե Պապ թագավորի սպանման նկարագրությունը։ Մեր երկու մատենագիրները իրարմե տարբեր կներկայացնեն կատարված ոճիրը։ Ըստ Փավստոսի՝ հույն զորապետի դավադրությամբ Հայաստանի մեջ ճաշկերույթի ատեն կսպանվի Պապ։ Ըստ Խորենացիի՝ Պապ կձերբակալվի, Պոլիս կտարվի և Թեոդոս կայսեր հրամանով սակրով վերջ կտրվի իր կյանքին։

Խորենացիի կողմն դեպքին այս կերպ Փավստոսին տարբեր ներկայացվելու մասին Մալխասյան կբացատրե այսպես. «Սրա պատճառն այն է, որ Խո-

րենաոին չէ կարողացել հավատալ, Բի հունաց զորավարները կհամարձակին Հայաստանում հայոց թագավորին ճաշի հրավիրելու ու ճաշի ժամանակ դավաճանորեն սպանել, և որովհետև ուրիշ աղբյուր չէ ունեցել Փավստոսի հաղորդածն ստուգելու՝ դուրս է ձգել նրան իբրև դարձյալ մի ժողովրդական առասպել, և Պապին սպանել է տալիս Բյուզանդիայում կայսեր հրամանով» (74)։

Երկու դիտողություն տեղին է և անխուսափելի։ Նախ, Մալխասյան որևէ ապացույց չի տար, նույնիսկ խարխյուն ապացույց, փաստելու թե խորենացին Փավստոսին դիրքը կարդացած է։ Իրեն թի Փավստոսին րսածին չէ կարողացել հավատալ, կնշանակե անոր դիրքը կարդացած է և չէ հավատացած։

Հետո, Մալխասյան ինչն էլ դիտե, թե խորենացին «ուրիշ աղբյուր չէ ունեցել Փավստոսի հաղորդածը ստուգելու»։ Ըսել է լին ուրիշ աղբյուր գոյություն չուներ, կնշանակե թե խորենացին Պապի սպանման պատմությունը ինք երևակայութենէն է։ Դաներ է։ Կնշանակե, թե ոչ միայն Պապի սպանման, այլ սույն կարճ ժամանակաշրջանի այն բոլոր դեմքերու և դեպքերու պարագային, որ խորենացին Փավստոսի պատմածեն տարբեր ներկայացուցած է, բոլորն ալ պատմահոր երևակայության գյուտերն են։ Չէ որ ան «ուրիշ աղբյուր չէ ունեցել Փավստոսի հաղորդածը ստուգելու»։ Եվ նկատի ունենանք, թե խնդրո առարկա ժամանակաշրջանի համար խորենացին այնքան շատ բաներ ունի պատմելիք, որ Փավստոսի ծանոթ չեն, և որոնցմե ոմանք քիչ վերջը կհիշենք։

Միթե Մալխասյան կրնդունի՞ այսպիսի հնարովի մի բան իր այնքան դոված ռացիոնալիստ, իսկական մտածող, քննադատական ոգին զարգացած և խղճամիտ պատմահոր մասին։ Դոնե բազմահմուտ ակադեմիկոսը ըսելու էր, թե խորենացին մեղի անծանոթ աղբյուրն մը առած կրնա ըլլալ Պապի սպանման դեպքը։

Իր գործածած աղբյուրներու անժլատ և պատրաստակամ հիշատակումը խորենացիի կողմէ և միաժամանակ ծանոթ ըլլալով իր քննական վերաբերման անոնց հանդեպ, բոլորովին անընդունելի կգտնենք Մալխասյանի հիմնական թեզը, թե խորենացին Փավստոսը չհիշատակելուն պատճառը այն է, որ «խորենացու կարծիքով այդ սովեր կձգեր իր պատմության վրա»։

Ինդհակառակը, խորենացին հավատարիմ իր քննական մեթոդին, ոչ միևնակ պիտի հիշեր Փավստոսը, եթե կարդացած էր, այլ պիտի զգուշացներ Սահակ իշխանը — ինչպես նաև իր ընթերցողները — որ հավատ չընծայեն առասպելաբան Փավստոսին։ Ուղղեր ասոր սխալը, կամ մեկդի դներ, միաժամանակ բացատրելով, թե ինչու կուղղե կամ ինչու մեկդի նենտե։ Նման վերաբերում խորենացիի սովորական մեթոդն էր։ Այդպես րրած էր ուրիշ օտարազգի պատմիչներու պարագային, ինչպես Կեփաղիոն, «սքանչելի եպիսկոպոս», Փերմիլիանոս, խոռոհբուդ։ Փավստոս օտարազգի մը համարված էր խորենացիի դրած ատեն, հինգերորդ դարու վերջին քառորդին։ Տես Փարպեցին։ Այդ մասին քիչ նետու։

Խորենացիի կողմէ, րատ իր սովորության, քննադատական հիշեցումը Փավստոսի ոչ թե սովեր պիտի ձգեր իր պատմության, այլ հավելյալ փաստ մը հայթայթեր քննող պատմաբանի իր վարկին։

Խորենացին երբ կրսե իր մեկնասին, թե րսողներ կան, որ դուք Բագրատունիներից Հայկեն սերած եք, գրեթե կշտամբական կհայտարարե, թե նման րսի-րսավներու հավատ րնծայելու չես, որովհետև ոչ մեկ որոշ ապացույց կհի-

չհն անանկ յսողները: Նմանաբար, այս միևնույն Խորենացին Պապ թագավորի սպանման շուրջ Փավստոսի բաժը կրկնելն վերջ պիտի հավելուր, թե այդպիսի անհավաստի պատմության հավատալու չէ, որովհետև կարելի չէ, որ հայ հողի վրա հույն դորականներ համարձակին հայոց թագավորը դավադրաբար սպանել:

Չափազանց հատկանշական է, որ բացի Պապի սպանման զրվագեն, Մալ-խասյան լուսբյամբ կանցնի Խորենացիի կողմն սույն կարճատև շրջանին պատահած դեպքերու հիշատակության, որ կամ բնավ չկա Փավստոսի մեջ, կամ բոլորովին տարբեր է անկե:

Փավստոսի պատմությունը կրնդգրկե 65 տարվա շրջան՝ 319 թ. մինչև 384: Խորենացիի պատմության մեջ անոր համապատասխան մասը կկազմե Գ զրքի բանի մը տասնյակ զլուխները:

Այս շրջանի պատմության երկու զլխավոր ստորաբաժանումն է. Ա. Թագավորներու պատմություն, Խոսրով Կոտակեն մինչև Պապի երկու զավակները: Բ. Կաթողիկոսներու պատմություն, Վրթանեսն մինչև Ասպուրակես:

Նթե առ ի շգոյն ուրիշ աղբյուրի, Խորենացին ստիպված էր Փավստոսին պուռը զարնել, ան միայն թագավորներու պատմության համար Փավստոսին դիմած կրնար ըլլալ: Որպես եկեղեցական Սահակի և Մեսրոպի աշակերտ, Խորենացիի քահանան ըլլալու էր կաթողիկոսներու պատմությունը, ոչ մինակ հայրապետանոցի դիվանեն, այլ նաև իր ուսուցիչ Սահակ կաթողիկոսեն: Որով երբ խոսք կըլլա ներսեսի մասին, որ Փավստոսի զրքին կեդրոնական անձն է, Խորենացին հավաստի տեղեկություն ճարած կըլլար ներսեսի զավակ Սահակեն:

Իսկ վեց թագավորներու պարապային որքա՛ն բազմաթիվ նոր բաներ կան Խորենացիի մեջ, որ Փավստոս բնավ չունի. և որքա՛ն դեպքեր, որ Խորենացին տարբեր կներկայացնե Փավստոսեն:

Չես պիտեր ինչո՞ւ Մալխասյան զժկամակած է ըսելու, թե այս կիսադարյան շրջանին համար Խորենացին կրնար ուրիշ աղբյուր կամ աղբյուրներ ունենալ: Խորենացին կրսե, թե ունեւ: Օրինակ, Խոռոհբուղ, Բարսումա: Կուտա ուրիշ պատմաբաններու ալ անունները. «Պաղեփատոս, Պորփյուր, Փիլեմոն և ուրիշ շատերը: Բայց մենք կպատմենք Բարսումայի զրքից, որ բերեց Խոռոհբուղը: Ինչո՞ւ Բարսուման կնախընտրեւ Որովհետև, կրսե, պարսիկները զինք կկոչէին Ռաստոսուն (որ կնշանակե ճշմարտախոս):

Նշանակենք կարգ մը նորություններ Խորենացիեն, որ Փավստոս չունի: Ամենն ալ Գ զրքեն:

Վրթանես կաթողիկոս և նախարարներ Կոստանյ կայսեր նամակ կգրեն: Խորենացին կուտա պատճենը այդ նամակին, ինչպես նաև Կոստանդի պատասխանը (զլ. և):

Գլ. Ժզ — Խորենացին կխոսի Տիրան թագավորի և Հուլիանոս կայսեր մասին: Փավստոս Հուլիանոսի անունը չէ լսած:

Գլ. Ժե — Հուլիանոսի նամակը Տիրանին:

Գլ. Ժէ — Շապուհի նամակը Տիրանին:

Գլ. Ժթ — Վաղենտինոս կայսեր թուղթը Արշակին:

Գլ. Իզ — Շապուհի թուղթը տիպրանակերտցիներուն:

Գլ. Իթ — Արշակի թուղթը Վաղեսին:

Վերոհիշյալներուն և ոչ մեկը գիտե Փավստոս:

Գլ. Ժզ — Կաթողիկոսին անունը Խորենացին կուտա Փառնեբոհ՝ Փավստոս՝ Փառեն:

Գլ. իև — Վասակ Մամիկոնյան Արշակին կզրզուր իր եղբոր՝ Վարդանի ղեմ։ Պատճառ։ Վասակ թոր եղբորը նախանձում էր մի հարձ աղջկա պատճառով»։ Արշակ նախատեց Տիրիթին ալ, Վարդանին ալ, որոնք փախուստ տվին Շապուհի մոտ երթալու։ Վասակ երկուքն ալ սպանեց ճանապարհին։ Փալստոս տարրեր ղրուխներու մեջ տարրեր պատճառով, տարրեր ժամանակ սպանել կուտալ յուրաքանչյուրը Այսպես։

Դ. դպրություն, զլ. ժև — Արշակ կորոշև Տիրիթը սպանել տալ Գնելի մահվան պատճառ ըլլալուն։ Տիրիթ զիշերով կփախչի։ Արշակ կիմանա փախուստը։ Ետեկն զորք ղրկեց և սպանել տվալ։

Դ. դպրություն, զլ. ժր — Վասակ Մամիկոնյան Արշակը կզրզուր եղբորը ղեմ, ըսելով, թև Վարդանը քեզ պիտի մատնև Պարսից թագավորի ձեռքը։ Վասակ ծպտյալ զինվորներու խումբով կերթա իր եղբոր ամրոցը և զավով կսպանև եղբայրը։

Գլ. լէ — Զիրավի պատերազմին Մերուժան կսպանվի։ Փալստոս Մերուժանը սպանել կուտա ատկև 15—20 տարի վերջ Մանվելի օրով։

Եթև պնդես, թև հորենացին կարդացած էր Փալստոսը, առեղծված մը քեզի շատ նեղիչ զլխու ցավ պիտի սպտճառև։ Փալստոս երկարորևն կպատմև Պապ թագավորի հակակեղեցական օրենքները և առ այդ միջոցառումները։ հորենացին ոչ մեկ բան զիտև այդ մասին։ Մեկ տող իսկ շունի ղոցված մենաստաններու, կուսանոցներու, և կեղեցապատկան հողերեն մաս մը զրավելու. և այլն։ Ինչպե՞ս բացատրել։

Երբ երկու հեղինակներև հատվածներու բաղդատությամբ շևս կրնար մեկը մյուսեն օգտված ըլլալը ցույց տալ, հաջորդ քայլդ է բաղդատել երկուքի մեջ ալ ղեպքերու ներկայացման շարքը։ Այդ մեկն ալ շենք ղտներ մեր երկու հեղինակներուն մոտ։ Եվ որովհետև քանի մը պատմական ղեպքեր երկուքն ալ կհիշատակևն առավել կամ նվազ տարբերությամբ, այդ չի նշանակեր, թև մեկը մյուսեն առած է, բացի այնպիսի ղեպք մը, որ բացառիկ բնույթ ունի։ Փալստոսի մեջ առաջին ղեպք է Անհուշ բերդի ղրվաղը։ Երբ այդ ղեպքը կկարդանք հույն պատմիչ Պրոկոպիոսի մեջ, անմիջապես կըսենք, թև Փալստոսեն առած է, և մեր այդ հայտարարության հակաճառող բանասեր շղտնվիր։ Ըստ իս, և թև հորենացին Փալստոսի գիրքը կարդացած ըլլար, ինք՝ որ քաջերու և քաջության ղործերու սիրահար է, պիտի կրկներ Գրաստամատի հուզիչ ելույթը։

Երբ հինգերորդ ղարու վերջին քառորդին հորենացին իր պատմությունը ղրի կառներ, արդյոք այդ առենվա հայ մտավորականներ ի՞նչ ըմբռնում ունենին Փալստոսի և իր ղրքի մասին։

Հարցումը տեղին է, և և թև կարենանք պատասխանել, կըլլա հույժ բացատրական։ Ընդունելի պատասխան մը ղտնելու մեղի կօղնև հորենացիի ժամանակակից և անոր պես հունասեր և հունարեն ղրքեր կարդացած Ղաղար Փարպեցին. «Իմ ըստ կարի պարապելալ յունական ուսմանց»։

Փարպեցին իր ղրած պատմութևնևն առաջ երկու պատմություն։ հայոց կար կըսև. Աղաթանգեղոս, ապա Փալստոս։

Իրև, բանասեր, որ Փալստոսը ուսումնասիրել կուղև, պարտի սկսիլ Փարպեցիի վկայությամբ, որ առաջինն է և ամենահինը։

Աղաթանգեղոսի անունը հիշելու ձևեն ղիտենք, թև Աղաթանգեղոս հանրածանոթ եղած ըլլալու էր հայ մտավորականության։ «Ելլոն երանելի Աղա-

թանգեղոս», կամ «Երանելին Աղաթանգեղոս, այր բանիբուն գիտությամբ», կամ «Երսնելի այրն աստուծո Աղաթանգեղոս»:

Մինչդեռ Փավստոսը հիշելու ձևը որոշապես ցույց կուտա, թե Փարպեցին մեկու մը մասին կխոսի, որ հայ մտավորականության ծանոթ մեկը շերեվիր: «Փոստոս ոմն Բուղանդացի», քիչ վերջ. «Զոմն պատմագիր կոչեցեալ Փոստոս Բուղանդացի»: Ոմն: Ոմն պատմագիր: Մանոթ մեկու մը համար, վարժ գրող մը, ինչպիսին Ղազար, նման բառ չի գործածել:

Բայց «ոմն»-ը այդքան ալ կարևոր կետ մը չէ, որ մեզմե հավելյալ մեկնաբանություն պահանջի: Կարևորը այն է, թե Փավստոսի մասին Փարպեցիի ըսածը լրջորեն քննելնուս ուրիշ տրամաբանական եզրակացության չենք երրնար հանգիլ, քան այն, թե Փավստոս հույն մ'էր, կամ հունագետ հայ մը, որ հայոց պատմությունը գրեց հունարեն լեզվով: Այդ Փարպեցիի «հոռոմ գրքերեն» մին եղած ըլլալու էր: Փավստոսի գրքին մեջ գտնված կարգ մը անպատշաճ և անվայել բաներու ակնարկելով, Փարպեցին անհավատալի կգտնե, որ Բյուզանդիոնի պես լուսավորության կեդրոն ուսած մեկը այդպիսի տգեղ բաներ գրե: «Գուցե, կգրե Փարպեցին, հանդուգն և անկիրթ մեկը լրբաբար իր կողմե բաներ մը գրեց և Փավստոսի անունով քշել ուզեց, թեև այս բանը հայտնի ցույց կուտա բոլոր քննողներու, քանզի հույներու մեջ կան անանկ մարդիկ. մանավանդ ասորիներու մեջ»:

Հույնը հունարեն գրքի մեջ իր կեղծիքը կրնա քշել, ասորին ասորերեն. հայը հայերեն: Վերլուծական կամ մեկնաբանական մեծ տաղանդի պետք չունիս Փարպեցիի վերոհիշյալ տողերեն հանելու միակ տրամաբանական զույգ օգրակացությունը: Առաջին. Փարպեցիի ունեցած Փավստոսը հունարեն գրված էր: Երկրորդ. եթե հունարեն չէր, ապա սկզբնագիր հունարենն հայերենի թարգմանված էր:

Այս մասին ավելի ընդարձակ գրած եմ, հարկ չկա ավելի ծանրաբեռնել հողվածս (տես «Փավստոս Բուղանդ և Ստեփան Մալխասյան», «Բազմավեպ», հունվար-մարտ, 1963, էջ 23—32):

Մալխասյան եզրակացուցած էր, թե Փավստոսի գիրքը գրված էր 470-ական թթ. հայրենասեր հայու մը կողմե, Մեսրոպի ալ աշակերտ: Հիշյալ հողվածիս մեջ եզրակացուցած էի, թե Փավստոս գրեց 390—400 թվերուն, հունարեն լեզվով: Ե գարու վերջին, կամ Զ-ի սկզբին հայերեն խմբագրություն ունեցավ հայու մը կողմե, որ Մանուկ Աբեղյանի բառերով «յուրատեսակ հայ հայրենասիրությամբ տողորված» էր:

Այս հողվածիս մեջ եզրակացությունս, շիտակ կամ սխալ, կապ մը չունի մեր գրած հարդի շուրջ: Սակայն Փավստոսի գրության ժամանակի մասին Մալխասյանի զուցմունքը հավելյալ փաստ մը կրնա համարվիլ մեր ըսածին. թե Խորենացին չէր կարդացած Փավստոսի գիրքը:

Մալխասյան կգրե. «Արդ քանի որ Փավստոսը գիտե թե Աղաթանգեղոսին և թե Թադեոս առաքյալի վկայաբանությունը, և մյուս կողմից Մովսես Խորենացին հինգերորդ դարի ութսունական թվականներին օգտվում է Փավստոսից (առանց անունը հիշելու), սրանից հետևում է, որ Աղաթանգեղոսի գրությունը պետք է ղենեք 461—465-ին, վկայաբանությունը 465—470-ին, իսկ Փավստոսի պատմությունը հինգերորդ դարի 70-ական թվականներին. վկայաբանություններից հետո, Խորենացուց առաջ» (48):

Մալխասյան գիտե, թե խորենացիի պատմությունը երկար ժամանակ առաջ մինչև լրանալը, թերևս տասնյակ կամ ավելի տարիներ։ Առ այդ մեկե ավելի ցուցմունքներ կան գրքի մեջ (այդ մասին քանի մը հողավածներու մեջ դրած չեմ, հարկ չկա երկարաբանել հոս)։ Խորենացիի մեկենասը՝ Սահակ իշխան, պատերազմի մեջ սպանվեցավ 483 կամ 485-ին, որով կրնանք հետևել, թե խորենացիի պատմությունը այդ թվականեն առաջ լմնցած էր, քանզի գրքի վերջին զրուխներեն միույն մեջ խորենացին խոսք կուղղե Սահակին։

Եթե պահ մը ընդունինք Մալխասյանի տված թվականը Փավստոսի դրության համար, 470-ական թ., շատ շատ կրնանք ըսել, թե երկու հեղինակներ դատ դատ, գրեթե միեկույն տարիներուն պրած են իրենց գրքերը։ Ով էր Փավստոս, ավելի ճիշտը, Մալխասյանի Փավստոսը, չենք գիտեր։ Ուր գրեց իր գիրքը։ Այդ ալ չենք գիտեր։ Ան Սահակ-Մեսրոպյան աշակերտներու ընտրանիին չի պատկանիր, դատելով Փարսլեցիի «մի ոմն»-են։

Որպեսզի Մալխասյանի վարկածին հավանիմք, պետք է ընդունինք, թե այս անձանոթ հեղինակը ուր որ կգրեր, ձեռագիրը լրացնելուն անմիջապես այդ խորենացիի ձեռքը անցավ։ Այդ ատեն տալագրություն չկար, ձեռագիրներու ընդօրինակությունը դանդաղ գործ էր։ Օրինակ, նկատի առնենք խորենացիի և Փարսլեցիի պարագան։ 'Նազար, ինչպիս գիտենք, կգրեր, թե իր գրքեն առաջ երկու հատ հայոց պատմություն գրված էր՝ Ազաթանգեղոս և Փավստոս։ Մինչդեռ իր գրքեն առաջ խորենացիի պատմությունը արդեն գրված լմնցած էր, այդ ալ ամբողջական պատմություն հայոց, ջրհեղեղեն մինչև Մեսրոպ։ Եվ խորենացիի գրքին և Փարսլեցիի գրքին միջև ժամանակամիջոցը շատ ավելի է, քան ըստ Մալխասյանի, Փավստոսի 470-ական թթ. գրած գրքի և խորենացիի 480-ական թ. լրացուցած պատմագրքի միջև։ Հայտնի է, որ Փարսլեցին 10 կամ 15 տարվա ընթացքին լուր չէ ունեցած խորենացիի պատմութենեն։

Մալխասյան փոխանակ ըսելու, թե Փավստոսի անունը հիշել «խորենացու կարծիքով ստվեր կձգեր իր պատմության վրա», ըսեր թե «խորենացին մեկե ավելի աղբյուրներե կօգտվի առանց անոնց անունները տալու, որոնցմե մեկն է Փավստոսը»։ Այդ ատեն մեզի կմնար հարցնել, թե ի՞նչ մասեր խորենացին առած է Փավստոսեն։ Ի պատասխան համոզիչ պատկան հատվածներ ցույց կտրվեն, բան մը, որ ցարդ չի եղած։

Կուգեմ ինքզինքիս արդարություն ընելու համար հայտնել, թե հանգուցյալ ակադեմիկոս, բազմահմուտ, բազմավաստակ և բազմերախտ Ստեփան Մալխասյանի հանդեպ ունեցած ջերմ հիացումս մազաչափ իսկ չէ ազդված վերի գրածներես։ Գիտեմ, որ եթե ողջ ըլլար, պիտի ուզեր, որ այդպես գրեի, որպես փորձ մը պատմական խրթին հանգուցյան լուծելու հավաքական մեր աշխատանքներուն մեջ։

ХОРЕНАЦИ И ФАВСТ

ГРАНТ К. АРМЕН (США)

(Р е з ю м е)

В арменоведении принято считать, что отец армянской историографии Мовсес Хоренаци при изложении третьей книги своей «Истории Армении» в числе многих других источников пользовался также «Историей Армении» Фавста Бузанда, не упоминая, однако, его имени. Ст. Малхасянц видит причину этого в том, что использование «Истории» Фавста, «полной легендами», по мнению Хоренаци, бросило бы тень на его книгу.

Автор статьи оспаривает это мнение и путем сопоставления соответствующих страниц трудов обоих историков стремится показать, что при написании своей «Истории» Хоренаци не имел под рукой книги Фавста. По мнению автора, Фавст написал свою книгу в 390—400 гг. на греческом языке, и только в конце V или начале VI в. она была переведена на армянский язык.